

Պոլսեցին, եթէ շոգենաւով Պաթումի առջեւէն անցնի, կը սկսի խօսիլ ռուսահայերէն: Վանեցին, սակայն, եթէ նայուածքով մը Պաթումի քարտէսին վրայէն անցնի, կը սկսի ճառել ռուսահայերէն:

Վանեցին *նաթիրալիզէ* ռուսահայ է:

Վանեցին անձուկելի, անպատուաստելի, անբաղադրելի է, սակայն, իբրեւ Յայ: Եթէ օր մը բոլոր Յայերը օտարանան, Վանեցին է, որ Յայ պիտի մնայ յաւիտեան ու կենդանի պիտի պահէ հայութիւնը:

Այս պարագան Վանեցին ինքն ալ գիտէ լռելեայն: Այս պատճառով քիթը մեծ է: Աստուած միայն գիտէ, թէ այդ քիթը ո՛ր կը սկսի եւ ո՛ր կը վերջանայ:

Վանեցիին քիթին վրայ արեւը մարը չի մտներ: